

2015թ. հոկտեմբերի 19-ին ժամը 15:30-ի

ՕՐԸ Լրատվական ծրագրում արված հայտարարության տեքստը

Հիմք ընդունելով ՀՀ ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածի դրույթները, ապահովելով «Հանրաքվեի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով քարոզչության մասնակիցների համար ոչ խտրական պայմաններ՝ «Հ3» հեռուստաընկերությունը 2015թ. դեկտեմբերի 6-ին կայանալիք ՀՀ սահմանադրական բարեփոխումների հանրաքվեի քարոզչության ժամանակահատվածում քարոզչության մասնակիցներին տրամադրվող վճարովի եթերաժամի մեկ րոպեի գինը սահմանում է 60.000 /վաթսուն հազար/ ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն: Հանրաքվեի քարոզչության մասնակից Ազգային ժողովի խմբակցություններին /պատգամավորական խմբերին/ քարոզչության ամբողջ ժամանակահատվածում «Հ3» հեռուստաընկերությունը վճարովի եթեր է տրամադրում ամեն օր ժամը 19:30-ից մինչև 21:30, յուրաքանչյուրին ոչ ավելի քան 10 րոպե եթերաժամանակ: Ազգային ժողովի խմբակցությունների /պատգամավորական խմբերի/ կողմից օրական չօգտագործված րոպեները համարվում են սպառված և չեն կարող օգտագործվել քարոզարշավի հաջորդ օրերին:

Գլխավոր տնօրեն  Երվանդ Բրուդիաննիսյան

